№ 22 Յունիսի 8 — 1872 — Յունիսի 8. № 22.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ։

Տարեկան գինն է 7 ռուբլի (փոստի ծախսով)։ Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի գիմեն այս հասցէով. Въ Тифлисъ. Въ Редакцію Армянской Газеты „Мшакъ“.

Թիֆլիսում կարելի է ստորագրվիլ խմբագրատան մէջ (Ուրծրունու տուն) և Իվանովի ընթերցարանումը։

ՄՇԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ։

Մասնաւոր յայտարարութիւն տպել տուողը պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ։ Յայտարարութիւնները ստանում են Հայերէն, Ռուսերէն, Վրացերէն, Ֆրանսիարէն, Գերմաներէն և Թուրքերէն։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կաթոլիկ եկեղեցի և անհատութիւն։—Ներքին տեսութիւն։ Նամակ Զաքաթալից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Արեգակի վերա էլ կան բիծեր։ Նամակ Տրապիզոնից։ Պարսկաստան. Ֆրանսիա. Արտաքին լուրեր։—Բանասիրական։ Գեղեցիկ Վարդիկ։—Խառն լուրեր։—Առևտրական։—Յայտարարութիւն։

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԱՆՀԱՏՈՒԹԻՒՆ

Բոլոր կրօնական վարդապետութիւններից Քրիստոնէութիւնը ամենանշանաւոր ազդեցութիւն ունեցաւ մարդի անհատութեան զարգացման վերայ։

Քրիստոնէութեան խնդիրն էր մարդի խղճմտանքը զարգացնել, այսինքն փոխանակ հասարակական բռնաւորութեան դատաստանի, Աստուծու դատաստանը կենդանացնել մարդի մէջ։ Իսկ մարդի մէջ Աստուծու դատաստանի ներկայացուցիչը նորա խղճմտանքն է։ Նա է միջնորդը Արարչի և արարածի մէջ։ Արդէն հինգերորդ դարի Հայաստանը աւետարանից աւանդված անհատութեան ուսմանձիրդ ըմբռնելուն, և այդ դաղափարի ամրանալուն պատեհ հող դարձաւ։ Հինգերորդ դարի Հայը քարոզում էր անհատութեան անկախ ինքնաձանաչութիւնը։ Վեր առէք, օրինակ, Եղիշէի մէջ յիշած հայ հոգևորականների և իշխանների թուղթը դէպի պարսկական Յազկերտ թագաւորը, և դուք կ'գտնէք այն տեղ յետագայ միտքը։ „Թէ մարդիկ թէ հրէշտակները ազատ են ստեղծված Աստուծով։ Նոցա կամքից է կախված կամ բարի կամ չար լինել, կամ հետևել կամ չ'հետևել Աստուծու պատգամներին։ Նոցանից է կախված բարի լինելով և բարին գործելով ժառանգել յաւիտենական կեանքը, կամ չարը գործելով արժանանալ երկնային պատժին։“ Այդ խօսքերով մօտաւորապէս, յայտնում է անհատութեան վեհ դաղափարը հինգերորդ դարի հայկական փիլիսոփայութիւնը։

Լուսաւորչական եկեղեցու դաւանութեան մեկնութեամբ եկեղեցին հաւատացեալների ժողովն է, բայց ոչ մի տեղ մեր դաւանութիւնը մեզ հակառակ դաղափարը չէ ուսուցանում, չէ ասում, օրինակ, որ հաւատացեալները պիտի անպայման, առանց իրանց խղճմտանքից խորհուրդ հարցնելու, հպատակին եկեղեցուն։

Հինգերորդ դարի, Զրադաշտի դինի դէմ սարսափելի կռիւների ժամանակ, երբ անհատներից ամեն մէկը, մարդ թէ կին, դէպի հայրենիք և կրօն ունեցած խոր սիրով զենաւորված, զոհում էին իրանց անձները,—եկեղեցին, որպէս հիմնարկութիւն կարծես թէ յետ քաշվեցաւ և կռւի վճռողական րօպէում թոյլ տուեց ուրիշ հասարակական զօրութեանը առաջնորդել ազգային շարժումը... այն զօրութիւնը անհատութիւն էր։ Եւ, ինչպէս ասում է մեր Եղիշէն, մարդիկներից ամեն մէկը իր անձամբ ներկայացնում էր եկեղեցին, մեզանից ամեն մէկը եկեղեցի էր։

×

Քրիստոնէութեան առաջին դարերին, երբ եկեղեցին դեռ ևս մաքուր էր պահում աւետարանից աւանդված սկիզբները, երբ եկեղեցին դեռ ևս պաշտօնական հիմնարկութիւն չէր, երբ մարտիրոսների արիւնի ամեն մի կաթիլը նպաստում էր քրիստոնէական վարդապետութեան մարդկութեան մէջ հաստատութեանը, երբ եկեղեցու հայրերը (եպիսկոպոսները) իրանց արժանաւորութիւնների և առաքինութեան համար միաբանութենից (համայնքից) ընտրվում էին, և ամէնքը հաւասար էին,—այն ժամանակ եկեղեցին առաջադէմ էր, պահանջում էր համոզմունքի ազատութիւն, պահանջում էր դաւանութիւնների համբերողութիւն...։

Փոքր առ փոքր Հռոմի եպիսկոպոսները որոնք, ուրիշ եպիսկոպոսներից ամենևին բարձր իրաւասութիւն չէին վայելել, սեպհականացնում էին իրանց այնպիսի արտօնութիւններ, որոնք կաթոլիկ եկեղեցու իշխանութեան զարգացմանը այնպիսի ընթացք տուեցին, ինչպիսին հետևում է միշտ ժողովրդապետական տարրից ծագած բռնաւորական սկիզբը։ Առաջ երևում է հոգևոր իշխանութիւնը, յետոյ եկեղեցական կանոնադրութիւն, յետոյ գործերի կառաւարութիւնը, նորանից յետոյ տէրութիւն, յետոյ աշխարհական իշխանութեան վերայ հիմնած միապետութիւն, և վերջապէս տիեզերական պետութեան ցնորքը։

×

Նախ և առաջ Հռոմի եպիսկոպոսները ձգտում են իրանց իշխանութեանը հպատակեցնել ուրիշ իրանց իրաւասութեանը հաւասար եպիսկոպոսներին։ Այդ նպատակով նոքա ձեռք են մեկնում դէպի Բիւզանդիայի պետութիւնը և օգուտ քաղելով Կոնստանդինի դէպի քրիստոնէութիւնը ունեցած հակումից հաստատում են պաշտօնական եկեղեցական իշխանութիւն։

Կաթոլիկ եկեղեցին ներողամիտ է դէպի Կոնստանդինի հրէշաւոր յանցանքները, և նորան, որը իր մայրը և եղբայրները սպանել է, սրբերի կարգն է դասում մահից յետոյ։ Միևնոյն կերպով նա ժամանակով ներողամիտ կ'լինի և դէպի Կարօլոս մեծի հրէշաւոր անբարոյականութիւնը։ Նա դաշն է կապում նորա հետ, եկեղեցու պաշտպան է յայտնում նորան, ինքն Պապը իր ձեռքով թագ է դնում այն մարդու գլխի վերայ, որը, չ'յիշելով ուրիշ յանցանքները, իր բոլոր հարազատ քոյրերից իր համար սիրեկաններ էր շինել։

Հռոմի պապերը բարեկամանում են մի զօրութեան հետ, ուշադրութիւն չ'դարձնելով նորա բարոյական ուղղութեան վերայ, մինչև որ նա կարող է օգտաւէտ լինել նոցա հիմնարկութեան հաստատութեանը, բայց հէնց որ այն բարեկամ զօրութիւնը նոցա համար վտանգաւոր է դառնում, նոքա ամեն միջոցները դործ են դնում մի ուրիշ հաւասարակշռող զօրութիւն յարուցանել հինին ընդհմադրութիւն անելու և նորա ամրանը արձակելու։ Նոքա մի կողմից համբերում են Հռոմ քաղաքի ներքին ժողովրդապետական քաղաքային կառավարութիւնը, միւս կողմից շողոքորթում են Բիւզանդիայի կայսրների կառավարութեանը,—բայց երբ երևում են Եւրօպայում բարբարոս ազգերը, պապերը և եկեղեցին նոցա ընդունում են որպէս Բիւզանդիայի և Հռոմի ժողովրդապետական կառավարութեան լուծից ազատողները...։ Պապերի հիմնարկութիւնը իր ձեռքը մեկնում է այդ բարբարոս ազգերից մինին գլխաւորապէս, Լոմբարդներին, որոնք գետեղվեցան հիւսիսային Իտալիայում։ Բայց միևնոյն կաթոլիկ եկեղեցին Լոմբարդների ամենամեծ թշնամի է դառնում, և կանչում է նոցա դէմ օտար ազգերը, Գերմանացիները և Գաղղիացիները, յարուցանելով նոցա դէմ անթիւ պատերազմներ, երբ Լոմբարդները ըսկըսում են հզօրանալ և ձգտել Իտալիայի քաղաքական միութեանը...։

×

Այդ էր միշտ Հռոմի պապերի քաղաքականութեան եղանակը։ Նոքա հարկաւոր ժամանակին չեն վախենում հզօր թշնամու դէմ ընդհմադրութիւն յարուցանելու համար ծայրայեղ ժողովրդապետական շարժումներին անգամ օգնութեան ձեռքը մեկնելու, քաջ հասկանալով որ ժողովրդապետական կուսակցութիւնները, ձգտելով դէպի կատարեալ հաւասարութիւնը, որպէս դէպի քաղաքական կատարելատիպը, չեն դնահատում անհատական իրաւունքները և շատ անգամ բարեկամանում են ծայրայեղ բռնաւորութեան հետ։

Կաթոլիկ եկեղեցին մի բանից էր վախենում միայն. ազատութիւնից, անհատական իրաւունքներից, մարդի մէջ անհատութեան զգացմունքի զարգացումից։

Օրինակ XII դարում, երբ Անգլիացիները Յովհաննէս Անհող թագաւորից պահանջեցին և ստացան մեծ հրովարտակի զօրութեամբ քաղաքական իրաւունքները, որոնք հիմք դրեցին Անգլիայի բոլոր ազատութիւնների զարգացմանը, պապը Իննոկենտիոս III նզովեց թագաւորին, ազատեց նորա հպատակները իրանց երդումից, յայտնեց որ թագաւորը իրաւունք չունէր կարգադրութիւններ անել այն երկրում, որը օրէնքով պատկանում էր սուրբ աթոռին, և աշխատում էր զրդռել Ֆրանսիայի թագաւորին Անգլիայի դէմ պատերազմ յայտնելու։ Պապերի կարծիքով աշխարհի բոլոր կաթոլիկ երկիրները պատկանում էին Ս. Աթոռին,—նոքա ձգտում էին տիեզերական միապետութեանը։

×

Պապութիւնը և կաթոլիկ եկեղեցին, որպէս հիմնարկութիւն, չէր կարող տանել մի որ և է հարևան զօրութիւն։ Ամենատարբեր մարդը եպիսկոպոսից պապ դառնալով, ստիպված էր հպատակել այդ զգացմունքին։ Պապութիւնը որը օգուտ էր քաղում գերմանական պետութեան զօրութեունից Իտալիայի ազգերին դէպի քաղաքական միութիւնը ձգտումներին արգելք դնելու,—ժամանակով Գերմանիայի կայսրութեան ամենամեծ, ամենաանհաշտելի թշնամի է դառնում։ Մի եպիսկոպոս պապ դառնալով ըստիպված էր ենթարկվել հիմնարկութեան ոգուն և կամայ-ակամայ դառնում էր կայսրութեան թշնամի։

Երբ Հէնրիխ V-ի, Գերմանիայի կայսրի մի բարեկամ եպիսկոպոսը պապ ընտրվեցաւ, կայսրը պապութեան հիմնարկութեան ոգուն ծանօթ լինելով բացականչեց. „մի ինձ բարեկամ եպիսկոպոսից, դուք ինձ թշնամի պապ էք շինում“։

Բայց այդ բաւական չէ.—պապութիւնը իր ձգտումներում դէպի տիեզերական միապետութիւնը գլխաւորապէս մի դաղափար ունէր աչքի առաջ.—միացնել մի անձի ձեռքումը աշխարհի բոլոր հոգևոր իշխանութիւնը։ Այդ նպատակին ձգտելով կաթոլիկ եկեղեցին արգելք էր դնում մինչև անգամ այն հիմնարկութիւնների և հասարակական զօրութիւնների ամրանը, որոնց հիմնելուն կամ հաստատելուն ինքն էր նպաստել, երբ նկատում էր թէ այն հիմնարկութիւնների ամրումը կարող էր վնասակար լինել կենդրօնական զօրութեանը...։ XI դարում պապը Գրիգոր VII-ը օրէնքով արգելեց կղերին պսակվելը...։ Հոգևորականները, կաթոլիկ եկեղեցու ամենահաւատարիմ ծառաները, վտանգաւոր էին երևում պապութեանը, եթէ նոցա թոյլ տուած լինէր անհատական կեանքով ապրել, եթէ թոյլ տուած լինէր հայրենիք ու ընտանիք ունենալ...։ Նոցանից շինեցին թափառական մարդիկ, առանց հայրենիքի ու դերդաստանի առանց տուն...։ Անձնական ձգտողութիւններից զրկված, պապութեան նպատակներին հաւատարիմ զօրք նպատակին հասնելու համար ամեն տեսակ միջոցները գործ դնելու պատրաստ ուրիշ օգուտները չունեցող բացի կենդրոնի օգուտները, ուրիշ խղճմտանք չունեցող բացի Ս. Աթոռի խղճմտանքը... մարդկային զգացմունքներից զրկված մարդկային զգացմունքներին օտար, ուրեմն ուրիշների մարդկային զգացմունքները չ'պատվող մարդիկ...։

XVI Դարում հիմնվեցաւ եղուխանների միաբանութիւնը, որը իրան լեսպէս նուիրեց պապութեան դաղափարի և օգուտների ծառայելուն,—բայց ժամանակով այնպէս զօրացաւ, այնքան հեղինակութիւն ստացաւ հասարակական կարծիքի մէջ, որ ինքը պապութիւնը սկսեց աշխատել ոչնչացնել այդ միաբանութիւնը։

×

Պապութիւնը մի դաղափարին է ձգտում.—միացնել մի անձի ձեռքումը աշխարհի հոգեւոր և բարոյական իշխանութիւնը։ Ուրեմն նա միշտ ձգտում էր բարոյական կենդրօնականութեանը։ Հետևելով այդպիսի ուղղութեանը նա յաջորդաբար էր վարվում, երբ իր պարտաւորութիւն էր համարում,

թէ ամեն հիմնարկութեան, թէ առանձին անձերի անհատական կեանքի արտայայտութիւնը սպանել...: Նա հալածումէր ազատ կարծիքը, գիտութիւնը, անհատական համոզմունքը...Քրիստոնէութեան առաջին երեք դարերին քրիստոնէական գաղափարը հալածված էր հեթանոս աշխարհից...: Եւ այն ժամանակ եկեղեցին պահանջումէր համոզմունքի ազատութիւնը...: Ահա տասն և հինգ դար որ կաթոլիկ եկեղեցին իր կողմից հալածումէ գիտութիւնը, կարծես թէ վրէժ հանելով առաջին երեք դարերի հալածումից...:

Բարոյական կենդրոնականութեան ձգտման վերջին խօսքը այն էր, որ նորերումս կաթոլիկութիւնը իր հոգևոր գլուխը անսխալական յայտնեց...: Բայց ուշ է...մարդկութեան ազատութեան ոսկեայ դարը անցաւ... Կրթ-ված մարդը չէ հաւատում ոչ մի անսխալականութեանը: Մեր դարի ճակատագիրը աշխատանք, փորձ, անհատութիւն յաւիտենական խօսքերը իր վերայ դրոշմված ունի: Կրթված մարդը միբարոյական դատաւոր է ճանաչում միայն,—իր խղճմտանքը: Խղճմտանքն է իր անձի և արդարութեան յաւիտենական գաղափարի մէջ, մարդի և աստուծու մէջ միջնորդը:

Ի՞նչ է խղճմտանքը...անհատի մարդկային պարտաւորութիւնների և իրաւունքների ճիշդ ճանաչութիւնը: Ո՞վ պիտի զարգացնէ մարդիս մէջ այդ անհատական յատկութիւնը...լուսաւորութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԶԱՔԱԹԱԼԻՑ

(Շարունակութիւն և վերջ)

II

Մինչև Շամիլի դերի ընկնելն քաղաքիս չորս կողմը երկիւղ կար: Փախստական Լեկզիները (դաշտ) անտառներումը թաք էին կենում և ճանապարհորդներին կողոպտում և շատ անգամ էլ սպանում էին: Օրինակ Մուղանլօ իջևանից, որ 26 վերստ է հեռաւորութիւնը քաղաքից՝ եկողները երկուսով-երեքով չէին կարող գալ Զաքաթալա, այլ մէկ գունդ (pota) զօրք պէտք է առաջնորդէր նրանց:

Շամիլի դերի ընկնելուց յետոյ (1859 թուից) հանգստութիւն ընկաւ: Միայն 1863 թուին Լեկզիները փորձ փորձեցին Զաքաթալու բերդը վեր առնելու: Աստմեն մօտ 6000 հոգի հաւաքուել էին և կէս գիշերից յետոյ 2½ ժամին յարձակուել էին բերդի վերայ: Այս ժամանակը բերդումը զօրքի շատ քիչ լինելու պատճառաւ քաղաքաբնակ հայերին (որ մօտ 200 հոգի այր մարդ են եղել) հրացան էին տուել և բերդի պատերի վերայ կանգնացրել զինուորների հետ բերդը պաշտպանելու համար: Լեկզիները չկարողացան բերդը վեր առնել և յետ դարձան: Հայերից երկուսը վիրաւորուել էին, որոնցից մէկը մէկ քանի ժամանակից յետոյ վերքից վախճանուել էր: Հայերից քաջութիւն ցոյց տուողները Ռուսաց կառավարութիւնից խաչեր և նշաններ (մեդալ) են ստացել:

Այժմ Զաքաթալումը համարվում է մօտ 120 կրպակ, որոնցից 15 օտարներինն են և մնացած 105 հայերի: Եւ 52 հայ գերդաստան:

Տեղոյս հարստութիւնը և վաճառականութիւնը հայերի ձեռքն է: Վաճառականների կրպակներն բոլորից շատ են, կան և արհեստաւորներ՝ դերձիկ, կոշկակար և այլն:

Այս տեղի հայերի գործի յաջողութիւնը կախուած է նահանգի հողի բերքից, որովհետև Լեկզիների և Ենգիլոների մեծ մասը հայերի պարտականն են և իրանց ոտացած թէ մեսաքսից, թէ բրնձից, թէ կաղինից և այլն տալիս են հայերին մէկ մասը մայր գումարից պակասցնելու և միւս մասը իբրև տօկոսիք:

Այս տեղ կարելի է ասել դեռ ընտանեկան կեանք չկայ, որովհետև առաջ գերդաստաններ շատ սակաւ էին բնակվում այս տեղ: Վերջի ժամանակները հայ գերդաստաններն սկսեցին շատանալ և դեռ տեղական միակերպութիւն կամ տառանձնութիւն չէ ստացել: Էստեղ կտեսնէք բերանը փաթթած, գլխի զարդարանքը Երևանու ձևով զադիփէն 1) գլխին դցած կանայք. էստեղ կտեսնէք գլուխ կապած ցփիսու ձևով և զադիփէն և վերքաշած և կոնների տակը հաւաքած կանայք. վերջապէս առանց զադիփայ վերջին նոր ձևով հագնուած կանայք:

Հայերը այստեղ բաւական սիրով են վարվում միմեանց հետ: Ջերմեռանդ են դէպի եկեղեցին, հաճարեա թէ ամեն մարդ ամեն օր գնում է եկեղեցի. թէպէտ քիչ ժամանակ է մնում այնտեղ՝ 5 րոպէից սկսած և երկար: Իրանց ջերմեռանդութեան նշանն է որ իրանց փողով մէկ մեծ եկեղեցի են շինել և մօտ 23,000 մանէթ ծախս արել:

Բոլորը ձի նստել գիտեն և սուր դրած ածել:

500 հոգի այստեղի հայերից որը բնակիչ է համարվում և որը օտարական. սրանցից մօտ 100 իրական սեռ են թէ մեծ թէ փոքր. 50 արու մանուկներ և մնացածներից մօտ 250 արական սեռը գրել կարդալ գիտեն. Ամենքը հաշիւների գրքերը հայերէն են գրում: Սիրում են իրանց որդուցը ուսում տալ:

Քաղաքումս կայ արքունական նահանգական ուսումնարան (Уѣздное училище) գիշերօթիկ աշակերտներով: Աշակերտաց բոլոր թիւն է 73, սրանցից 32 հայ են:

Այս տեղ կայ և Հայոց գրատուն: Գրատունը սկսուեց 1870 թուի մայիսի 30-ից: Հիմա գրատունն ունի 340 մանէթի գիրք—165 անուններ. 85 մանէթ փող և բաւական ստանալիք:

Այս տեղ ստանում են „Մշակ" լրագիրը 7 օրինակ (որոնցից մէկը Կախ գիւղումը)

„Արարատ" ամսագիրը 6

„Մեղու Հայաստանի" լրագիրը 4 օրինակ:

Երեք տարի առաջ այստեղ սովորութիւն կար քահանայի համար սիրայ հաւաքել: Դրա հիմքը սկսուել է այն ժամանակից, որ առաջ այստեղ քահանային իւրաքանչիւր օր մէկ կրպակաւոր ճաշի էր կանչում: Վերջը մէկ քահանայ առաջարկել է ժողովրդեանը ճաշի տեղ, որ անյարմար էր իրան համար և ժողովրդեան ձանձրութիւն, փող նչանակել: Ժողովուրդը համաձայնել է և այնուհետև սկսել են իւրաքանչիւր կրպակ քահանային տարեկան տալ 1 մ.—2 մ. Վերջի ժամանակները ժողովուրդը տեսաւ որ քահանայի արդիւնքը բաւական է իրան և առանց սիրայի կարող է կառավարուել. վասն որոյ սիրէն վերացրուց:

Սիրա ասած բանը մինչև այս օրս Կախ գիւղումը շարունակվում է. իւրաքանչիւր կրպակ տարեկան 4 մ. է տալիս քահանային:

Քաղաքումս կայ Հաշտարար Դատաւոր. որը իրաւունք ունի միայն քաղաքի բնակիչների կամ (օտարականի) գործը քննելու:

Քաղաքը պատած է առանձին ամուր պատով և ունի 5 դռներ, որ գիշերը փակվում են:

Բերդի մէջը շինած է արձան յանուն Գենեռալ Գուլեսկովի, որին պատերազմի մէջ սպանել են 1804 թուին:

Ռուսաց եկեղեցին չինած է բերդի մէջն. Հայոց և Կաթոլիկներինը քաղաքի մէջ:

20. մայիսի Միքայէլ Քոչարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

„Кавказъ" լրագիրը հաղորդումէ, որ Կասպից ծովից ոչ հեռու, Մանգիշլակի վերա (Թուրքիստանի մէջ) գտնվեցան քարածուխի խաւերը: Ուղարկվեցաւ տեխնիկային հմուտ մի անձ հետազօտելու համար: Եթէ լուրը կը հաստատվի, Կասպից ծովի նաւադնացութիւնը նոր ոյժ կը ստանայ:

—

Նովոչերկասկից դրումեն, որ երկաթուղիների չինող պ. Պոլիակովը, նորերումս այդտեղի աղջիկների գիմնազիային 10,000 ռուբլի ընծայեց:

—

Ռուս Բուլգարում քաղաքում (Սամարա գաւառում) նոր սկսվել է հրատարակվել թաթարական լեզվով մի քաղաքական լրագիր: Նա քննումէ թէ ռուսիոնական թաթարների թէ Արևելքի մահմեդականների դրութիւնը:

—

Ռուս „Терек. Вѣд." լրագիրը հաղորդումէ, որ Ղզլարում այս օրերս շատ սաստիկ և ցուրտ քամի էր փչում: Ջերմաչափը ընկաւ մինչև 3 աստիճան տաքութեան: Բոլոր խաղողի վազերը փչացել են և յոյս չկայ որ այս տարի զինին յաջողվի:

Մեզ գրում են Շամախուց որ մի անձն փոխանակ այդտեղ կազմված մանանաժողովին յանձնելայն բարեգործական գումարները որոնք ուղարկվեցան երկրաշարժութենից ՀԼասված թշուառներին օգնութիւն հասցնելու համար,—պահումէ այդ փողերը, ասելով բացէ ի բաց, որ չի տայ մանանաժողովին, այլ ինքն իր համար արդէն ցուցակ չինած է, ում պիտի օգնի: Իսկ հասկանալի է այդ տեսակ մարդիկը ումն են օգնում... իրանց հաճելի մարդիկներին, կամ բոլորովին՝ ոչ ոքին,—բայց ոչ թէ նոցա, որոնք ճշմարիտ կարօտ են դրամական օգնութեանը:

—

Վրաց „Դրօէբա" լրագիրը տպեց մի հետաքրքիր նամակագրութիւն Իգդիրից: Այդ գիւղը 17 վերստ Էջմիածնից հեռու է, ունի 300 հարիւր հայ ծուխ, բնակիչները մեծ մասամբ պարապումեն բամբակի բուծութեամբ: Նամակագիրը ինքն վրացի է, և չէ կարելի չը զարմանալ որ վրաց լրագրի մէջ հաղորդումեն օգտաւէտ տեղեկութիւններ հայոց աղգաբնակութեան վերաբերութեամբ, իսկ հայոց լրագիրներում Կովկասի հայոց նահանգներից (Երևան, Նախիջևան) մինչև այժմ շատ քիչ ճիշդ տնտեսական տեղեկութիւններ են հաղորդում և ուշադրութիւն չեն էլ դարձնում „Մշակի" հրաւէրքի վերա...:

—

Պ. Քոչարեանցը հաղորդումէ մեզ Զաքաթալից որ այդտեղ բոլոր առաջին հարկաւորութեան նիւթերը թանդացան, և համեմատումէ նոցա գները 1866 թ. գների հետ: Օրինակ 1866 յունիսի փութը, ածէր 30—35 կոպէկ,—այժմ 80 կ.: Բրինձի լաւ տեսակի 80 կ.,—այժմ 1 ռ. 80 կ: Բրնձի ցածր տեսակի 50 կ.,—այժմ 1 ռ. 50 կ.: Իւղը 1866 ածէր զրվանքէն 18 կ.,—այժմ 29 կ: Կարագը 13 կ.,—այժմ 25 կ: Մի հաւ ածէր 10 կ. իսկ հիմի 15 կ.: Մի սագէն փայտը որ ածէր 4 ռ. 50 կ. ածէ այժմ 5 ռ...և այլն:

—

Ղզլարից մեզ մատնաւոր նամակով հաղորդում են, որ մօտ օրերումս քաղաքում եղել է քանի մի անգամ հրդէհ, իսկ վերջինը աւելի սաստիկ որ թեել է մինչև առաւօտեան 4 ժամը: Կարկուտից ևս ազատ չեն մնացել Ղզլարեցիների այգիները:

—

Այս օրերս վերադարձել է Էջմիածնից մեր առաջնորդ սրբազան Մաքար Արքեպիսկոպոսը:—Ցոյս ունենք, որ այժ կը տնօրինվի Ներսիսեան դպրոցի հոգաբարձուների ընտրութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԵԳԱԿԻ ՎԵՐԱ ԷԼ ԿԱՆ ԲԻԾԵՐ

Մեր անցեալ տեսութիւնների մէջ, մենք Եւրօպայի գործերի դրութեան վերա խօսելով՝ ցոյց տուեցինք այն ընդհանուր երևոյթի վերա, որ ամեն տեղ, աշխարհի այդ մասում, որտեղ երկու աղգութիւնները միմեանց հանդիպումեն, նոցանից մեծը և ուժեղը միշտ իր բոլոր ջանքը գործ է դնում փոքրին ոչընչացնելու, նորան աշխարհի երեսից ջնջելու: Մենք այդ տեսանք Ավստրիայում, Պրուսիայում, Անգլիայում և անցեալ ժամանակներին Ֆրանսիայում:

Այդ ընդհանուր օրէնքից միակ բացառութիւնը,—փոքրիկ Շվէյցարիայի հանրապետութիւնն է:

×

Միևնոյն երևոյթը կրկնվումէ և Ովկիանոսի այն կողմը,—Ամերիկայում:

Երբ Կոլումբի հետ միասին երևեցան նոր աշխարհի մէջ Եւրօպացիները, նոքա այդտեղ պատահեցին վայրենի ցեղերի բնակիչներին: Նոցա թիւը հասնումէր 5 միլիօնի: Բայց գաղթականները փոքր առ փոքր բազմանում էին և սեպհականում էին վայրենի բնակիչներին թողնել տափակ երկիրները, որտեղ նոքա առաջ էին ապրում, և հեռանալ սարերի մէջ:

Վայրենիները այժ չունէին կռուել սպիտակ ցեղի հետ, և այժմ նոցա թիւը նուազվել է մինչև 300,000 գլուխ:

×

Որպէս էին վարվում սպիտակները վայրենիների հետ,—այդ երևումէ յետագայ երկու օրինակներից: Վայրենիների մի քանիները աւազակութիւն գործեցին: Փոխանակ նոցա յանցանքը հասարակ դատաստանով քննելու, նոցա դէմ ուղարկվեցաւ զօրք Զինուորականները յարձակվեցան նոցա բնակարանների վերա, քարուքանդ արեցին նոցա և 170 մարդ սպանեցին:

Մի ուրիշ անգամ երկաթուղու մի գընացքի պաշտօնեան նկատեց թէ վայրենի ճիւաւորների մեծ բազմութիւնը (մօտ 200 երկաթի ճանապարհի մէջ տեղով էր անցնում: Նա գիտմամբ աւելացրեց շոգեկառքի արագութեան ոյժը, այնպէս, որ վայրենիները շփոթվեցան, և մի քանիսները ժամանակ չունենալով փախչել, նոցանից 13 սպանվեցան և շատ ձիաներ մնասվեցան:

Եւ այդ տեսակ երևոյթները բացառութիւններ չէին, այլ սովորութիւն էր դառել...

×

Երկու տարի սորանից առաջ միացեալ նահանգների նախագահ պ. Գրանտին (կամ ինչպէս վայրենիները նորան անուանումեն Մեծ Հայր) ներկայացան այդ ճնշված ցեղերի կողմից պատգամաւորները, որ յայտնեն նորան իրանց անմխիթար և սարսափելի դրութիւնը: Պատգամաւորների գլխաւորը, Կարմիր Ամպ, քանի մի ճառեր ասեց, որոնք այն մարդի սրտի խորքից էին բղխում, որը զգումէր իր սեպհական և իր ազգի ճնշված դրութիւնը: Մենք չենք կարող չ'բերել այստեղ նորա ասած ճառերից մինը:

×

„Ես երբէք չէի կամենում հակառակել Մեծ Հօրը, բայց ես չեմ կարող չ'յայտնել հետևեալը. ուստ ձայն էր լսվում առաջ այդ երկրում,—սա կարմիր ժողովրդի ձայնն էր: Կարելի է Մեծ Հայրը բարի է և ներողամիտ, բայց ես այդ չեմ նկատում: Մեզանից խլեցին մեր հողերը, մեզ թողել են երկրի մի փոքրիկ կտոր: Ես ցանկանումեմ մնալ այնտեղ, որտեղ ծնվել եմ. հայրս և մայրս ասումէին որ այն երկիրը ինձ է պատկանում: Այժմ ես կարօտ եմ ձեր օգնութեան,—ես ներկայացուցիչ եմ Սիու հին ազգութեան: Մենք հարստութիւն չէինք պահանջում, մենք նորան չենք ցանկանում, որովհետև չենք կարող հարստութիւնը մեզ հետ այն աշխարհը տանել: Մենք կամենումենք, որ տէրութիւնը կատարի իր պատաւորութիւնները, որոնք յիշվումեն պայմանագրի մէջ":

„Պաշտօնական անձերը (պաշտօնեաները) որոնց մեզ ուղարկումեն, կողոպտումեն մեզ և սովորեցնումեն մեր ազգը աղաղ խմելու: Մենք պահանջումենք արդար և ազնիւ մարդիկ, և այդ նպատակով ձեր օգնութեանն ենք դիմում: Ես խնդրեցի զինուորական պաշար,—մեզ չ'տուեցին: Դուք վախենումէք, որ ես կ'զինուորվեմ, սկսեմ պատերազմ: Դուք մեծ և զօրեղ ազգ էք, իսկ մենք մի խումբ... մեր մէջ պատերազմ չի ծագիլ, եթէ դուք կ'սպասէք, որ մենք նորան սկսենք: Այդ բոլորը անտանելի է մեր ցեղերի համար, և միևնոյն ժամանակ մեր մէջ չ'կան գրողներ, ինչպէս ձեզ մօտ, որոնք կարօղանային ճշմարտութիւնը ցոյց տալ"...

×

Այդ ճառի առիթով ամերիկական լրագիրներից մինը ասումէ: „Մենք կ'ցանկանայինք, որ Կարմիր Ամպը Ամերիկայի իւրաքանչիւր քաղաքի մէջ այդ տեսակ ճառեր ասէր: Այն ժամանակ ազգը կ'պահանջէր տէրութիւնից, որ նա ազնիւ և արդար կերպով վարվէր ամերիկական վայրենիների հետ":

Եւ ճշմարիտ, հասարակութեան համակրութեան մէջ միայն կարող է ողորմելի ազգութիւնը իր համար հաստատ պաշտպան գտնել: Ամերիկայում հասարակութիւնը,—ոյժ է, որը կարող է ուղղել տէրութիւնը իր կամքով: Հարկաւոր է միայն որ ինքն հասարակութիւնը հասկանար որքան անարդար և անիրաւ է ճնշել թոյլ ազգութիւնները:

---

1) Սպիտակ մետալից վրէն դցելու լայն չոր է, որ կայնայք ուրիշ տեղ գնալիս վրէն են դցում:

Այդպէս էր և Նեգրերի վերաբերութեամբ: Նոցա ազատելու միտքը ծնվեց նախ և առաջ և տարածվեցաւ քանի մի մանաւոր ընկերութիւնների մէջ, որոնք հասարակական կարծիքի վերա ազդելով ստիպեցին վերջապէս և տէրութեանը սկսել պատերազմ Նոցա ազատութեան համար:

×

Կարմիր Ամպը իր ճառերով մեծ համակրութիւն ստացաւ քանի մի ամերիկական թագիրներից: Այդ համակրութեան մէջ, գուցէ ճնշված ազգը իր համար պիտի գրաւական տեսնէ իր դալու ազատութեան համար:

ՆԱՄԱԿ ՏՐԱՊԻԶՈՆԻՑ

Անցած փոստայիս խօսացած էի հետզհետէ հաղորդել ձեզ ազգային լուրերն. արդէն ամսոյս 13-ին մեր նորընտիր պատրիարգին Վեհափառ Կայսեր ներկայանալն և ի բարցրադոյն դրան փառաւորապէս պատրիարգ հայոց կաթոլիկաց հրատարակվելն գրած իմացուցած էի, տեսնալու բան էր այն չքեղ դարձն բարձրագոյն դռնէն ի պատրիարգարան, թագաւորական կառքին մէջ նստած քովէն երկու Եավէրներ (աթիւդանթ). 150 հատ քօմէսիոնի զօրքերէն (ժանդարմ). 50 փայթօն, 300 ձիաւոր և բազմաթիւ ժողովրդեան խիստ շատ... Հասունը վերջին ճիգն թափելով եւրոպայի մեծ տերութեան հիւպատոսներուն դիմից որ արդեաք ըլլան մեր նորընտիր պատրիարգին նստելոյն, կեցցէ մեծ Եպարքոս Մահմուտ Նատիմ փաշան, ամէն մէկուն այնպիսի պատասխաններ տվաւ, որ չէին յուսար: Գաղղիոյ դեսպանին հարցուց թէ դուք այն ինչ ժամանակ փափին Սիլապուս կոնդակը ինչու չընդունեցիք և մինչի այս օրս ալ չէք ընդունիր, Աւստրիոյ դեսպանին հարցուց դուք ինչու փափին հետ ունեցած քօնքորտաթ պատուեցիք և իրեն անսխալութիւնը չէք ընդունիր, աւասիկ ես ալ նոյն իրաւամբ ԲԵՎԵՐՍՈՒՐՈՒՍ կոնդակը չեմ ընդունիր. իսկ Անգղիոյ դեսպանին ըսաւ, 1856 փարիզու ահտնամէին (դաշնագրին) դուք չէիք ստորագրողք, որ մեր ներքին գործոց ոչ ոք չի պիտի կարողանայ խառնուելու: Ռուսաց դեսպան Իգնատիէվը շատ օգնութիւնը հասուց մեր նորընտիր պատրիարգին նստեցնելոյն. հասունանք որ ասով ալ չկարացին խոչնդոտն լինել՝ յուսահատութիւնը տիրեց վրանին, դիմեցին Խրիմեանին թէ առ մեզի քու պատրիարքական հովանաւորութեանդ տակը, որ բարձրագոյն դրան հետ գործերը ձեր ձեռք ունըվի, Խրիմեանն ալ իրենց պատասխան տվաւ, եթէ, կընդունիք ազգային սահմանդրութիւնն ես ալ՝ կրնամ ձեզ ընդունիլ, ապա թէ ոչ, չեմ կրնար ընդունիլ: Անկից ալ ունայնաձեռն ետ դարձան ինչ ընելիքնին չէն գիտեր, մեջերնին շատ չշնկոց կայ: Վեննայու միաբաններէն 18 քահանայ եկան ազգին կողմն անցնելու, բայց ազգային ժողովը առանց ուշադրութեան մէկէն ի մէկ չընդունեց դիրենք: Եթէ տեղւոյս (Տրապիզոն) լուրերէն հարցնես նոր բան մը չունիմ. դեռ եկողներին գոցէ: Ցուսամ թէ եկող փոստայիս այս առաջիկայ կիւրակէին եկեղեցին երթալնիս ձեզ իմացնելու պատեհութիւնն պիտի ունենամ. նոր Վալի փաշանիս այսօր երկու օր է գալը վաղը ֆիրմանը պիտի կարդացվի. տեսնանք մեր մասին ինչ նոր կարգադրութիւն կընէ: Կ. Պոլիսէն մեզի գրած են որ ամեն բան փաշային հետ խօսուած է, գալով այս տեղաց հասունանց բոլորովին յուսահատ և լքեալ են, որոնց նկարագրութիւնը ընելու ժամանակ չունիմ կը ներէք, եկող շաբթուան փոստայիս նոր լուրեր տալու պատրաստ եմ:

Մայիսի 22. * * *

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Պարսկաստանի նամակագրութիւններից տեղեկանում ենք.—Ուրմիոյ լճակի արևմտեան կողմում, Սալմաստ նահանգի մէջ, մայիսի 15-ին, երեկոյեան 7 ժամուն, սկսուել է ամենասաստիկ անձրևի տարափ: Երկու ժամից յետոյ գետերը բարձրանում են յորտացած հեղեղով, և աւերում են գիւղօրայքը, որ այդ գետերի ափերում շինուած էին: Օրինակի համար, Սավրայ գիւղից աւերուած է 200 տուն, Դիլիման գիւղաքաղաքից 200 տուն և ամբողջ բազարը իւր խանութներով, Մահլամ գիւղից 100 տուն և Ղարաբաղ կոչուած կողմում ամբողջ եօթն գիւղեր: Այդ գիւղօրայքի բնակիչքը մեծ մասամբ Հայեր են:

Հեղեղի գլխաւոր վնասներից մինն էլ այն է եղել, որ նա բոլորովին ոչնչացրել է հունձքի արտերը, ծածկելով նորանց սարերից բերած աւազով: Խղճալի ժողովուրդը, որ յոյս ունէր այս տարուայ հունձքով առնել սովի առածը, այդ բախտից ևս զրկուեցաւ:

ՖՐԱՆՍԻԱ

Վերջին պատերազմը պարզ ցոյց տուեց Ֆրանսիային, որ ոչ մի զօրք չէ կարող ընդիմանալ զինուորված ազգին, մանաւանդ այն ժամանակ, երբ այն ազգի մէջ տարածված է լուսաւորութիւնը: Ազգային ժողովի մէջ զօրքի վերանորոգութեան մասին վիճաբանութիւնների ժամանակ. գնդապետ պ. Դանֆերը, որին չատերը նախանձումեն, որովհետև նա կարողացաւ քաջութեամբ պաշտպանել Բելֆօր ամրոցը, յետագայ խօսքերը ասեց. ,,ամենից վտանգաւոր է պատերազմը երկու այնպիսի երկիրների մէջ, որոնք կրթութեան տարբեր աստիճանի են կանգնած, որովհետև կրթութիւնը,—այժ է'':

Զը նայելով այդ ճշմարտութեանը ազգային ժողովը չտապում է հաստատել ընդհանուր պարտաւորութեան և զօրքի մասին օրէնքը և չէ մտածում նախ և առաջ ժողովրդական ուսման վերա հոգալու:

Գնդապետ Դանֆերը ապացուցանում էր, որ միայն զարգացած զինուորները կարող են ըմբռնել իրանց զինուորական կառավարութեանը հպատակելու անհրաժեշտութիւնը, միևնոյն ժամանակ, հարկաւոր բոպէում իրանց մտաւոր անկախութիւնը պահել:

Իր ասած խօսքերը հաստատելու համար նա պատմեց, թէ ինչպէս Բելֆօրի պաշարման ժամանակ, օֆիցէրները և հասարակ զինուորները նորա զօրքի մէջ, իրանց սեպհական համոզմունքով վարվելով, կարողացան ընդիմանալ թշնամու յարձակմանը:—,,Մտածող հրացանները'' ծիծաղելով նըկատեց մարկիզ Կաստելանը.

Պատգամաւոր Բրիւնէ ընդիմանում էր ազգային ժողովի քննութեանը առաջարկված նախագծին: Նա ապացուցանում էր, որ եթէ նախագիծը կը ընդունվի զօրքը միևնոյն դրութեան մէջ կը մնայ: Նորա կարծիքով հայրենիքի պաշտպանելը կարելի է միայն այն ժամանակ, երբ իւրաքանչիւր գաւառ իւրաքանչիւր վիճակ իր սեպհական զօրք կունենայ, երբ իւրաքանչիւր զինուորը իր մօտ կը մնայ իր տունը և իր ընտանիքը պաշտպանելու համար:—Նա կամենում է ոչ թէ ամրոցները իր հայրենիքում տեսնելու, որոնց կամ պաշարումն, կամ անուշադիր են թողնում, այլ ընդհանուր ազգային պաշտպանութիւն:

,,Ես կը կամենայի, ասեց Բրիւնէ, որ զօրքը, եթէ կարելի է ասել, գետնից խոտի պէս դուրս գար երկիրը կը փրկի ոչ թէ մշտակայ այլ ժողովրդական զօրքը, այսինքն զինաւորված ազգը'':

Զօրապետ Տրոշիւ իր ճառի մէջ ճշդութեամբ նկարագրեց մշակայ զօրքի ինչ լինելը: ,,Նապոլէօնի զօրքը հասցրած էր մինչև անբարոյականութեան վերին աստիճանը, որովհետև նա ազգի զօրքը չէր, այլ մի մարդի, որի փառասէր նըպատակներին նա ծառայում էր: Զօրքը, որ ինչպէս դեկտեմբերի 2-ին 1851 թուի, ազգի դէմ էր կռուում, չէր կարող իր կոչումը համարել պաշտպանել Ֆրանսիա, այսինքն մի և նոյն ազգը: Հասցնելով զօրքը մինչև անբարոյականութիւնը, պիտի շարունակէին նորան անբարոյականացնելու, որ կարողանային նորա մէջ պաշտպանութիւն գտնել և այդպէս հասցրին նորան մինչև անդունդը: Տէրութեան ձեռքումը աստիճանները և պատուանշանները անբարոյականութեան և կաշառքի միջոց դարձան: Սեդանից յետոյ,—աւելացրեց Տրոշիւ դառն ժպիտով,—Ֆրանսիայի մէջ այնքան բազմացան զանազան պատուանշաններ ունեցող մարդիկ, որ կարելի էր կարծել, թէ մեր զօրքը ամբողջ Եւրոպային յաղթեց: Ֆրանսիան ընկաւ այն օրը, երբ առաջին անգամ նա պատահեց զինաւորված ազգին, որը վաղուց արդէն վայելումէր կատարեալ և ընդարձակ անկենդրօնականութիւնը'':

Զնայելով այդ բոլոր ճառերին, ազգային ժողովը հաստատեց զօրքի վերաբերութեամբ նոր օրէնքը, որը ոչինչ փոխելու և բարվոքելու չէ, միայն թէ կաճեցնի զօրքի թիւը: Զինուորը ինչպէս և առաջ, զինուորական մինիստրի լիակատար իշխանութեանը կենթարկվի, որի զօրութեամբ հարաւի ընիկը կարող է հիւսիս ուղարկված լինել ծառայելու համար և փոխադարձապէս,—և այդպէս կարող է գործ դրած լինել տէրութեան նպատակներին: Գլխաւոր հիմքը ընդհանուր զինուորական պարտաւորութեան այն է, որ իւրաքանչիւր զինուորը կարճ միջոց ծառայելուց յետոյ զօրքի մէջ, զինուորական մնար, պահելով իր մօտ զէնքը (ինչպէս այդ Զվիցերիայում կայ) և տուն վերադառնալուց յետոյ էլ: Իսկ այդ չկայ նոր Ֆրանսիական օրենքների մէջ: Միայն այդպիսի կարգ ու կանոնը կարող է զրաւական լինել պետութեան զանազան բռնի փոփոխութիւնների դէմ: Ֆրանսիան դարձեալ պրետորիանային, վարձկան զօրք կունենայ, բայց ոչ թէ զինաւորված ազգ, որը կարողանար իրան թէ ներքին թէ արտաքին թշնամու դէմ պաշտպանել:

Հասկանալով այս բանը Տրոշիւ ասումէր ,,Ցոյս մի դրէք կիսա-միջոցների վերա, մի յուսաք համաձայնել այն, ինչ որ կայ, այն լանի հետ, որ պէտք է լինի'':

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— ,,Միջազգային հեռագրական ընկերութիւնը'' հաղորդումէ Նիւ-Իորկից, որ Ամերիկան ամրացնումէ ծովային տեղերը և զինաւորումէ նաւատորմիղը:

— Բոհէմիայում սարսափելի հեղեղ կար, որ մի քանի հարիւր մարդիկների մահը պատճառեց: ,,C. П. B.'' լրագիրը ասումէ որ այդ դժբաղդութեան առաջ լռել են թշնամութեան ձայները և կուսակցութիւնների մէջ երկպառակութիւնը ու ամեն կողմից վնասվածների համար ուղարկվումեն նուէրները:

— Պրագայի ,,Politik'' լրագիրը Բոհէմիայի դժբաղդութեան առիթով մի յօդված է տպել, որտեղ ասում է թէ բարեգործական նուիրաբերութիւնները ոչինչ չեն օգնելու, այլ պիտի պահանջել Բոհէմիայի համար կառավարչական անկախութիւն: Վնասը հասնումէ մինչև 50 միլիոն ֆլորին: Հարկաւոր կը լիներ որ կազմվեր և հաւաքվեր ազգային ժողով (սեյմ) որ կը բացատրեր 50 միլիոնի կրեդիտը երկրի համար, ինչպէս որ այս պատահել է Ռունգարիայի մէջ: Միևնոյն ժամանակ սեյմը կարող էր և երկրի կառավարչական մասին հոգալ և վնասված տեղերի վերաբերութեամբ հարկաւոր կարգադրութիւններ անել:

— Իտալական պարլամէնտում պատգամաւոր պ. Կայրոլի առաջարկել է Իտալիայի մէջ ընդհանուր ձայնատուութեան օրէնքը մտցնելու: Մինիստր-Նախագահ պ. Լանցա ընդիմանում է այդ օրէնքի մտցնելուն, բայց չէ ընդիմանում պարլամէնտի մէջ նորա հրապարակական քննութեանը:

— "Allgemeine Zeitung" հաղորդում է թէ նոր ընտրած հայ-կաթոլիկ պատրիարգ Գիւրբէլեանը հաստատվեցաւ արդէն Սուլթանի հրամանագրով:

— Ֆրանսիայի ազգային ժողովից կազմված մի մասնաժողով՝ քննումէ այժմ այն խնդիրը, թէ Նապոլէօնի կոդէքսը (Նապոլէօնի օրէնսդրութիւնը) պիտի կրկին իր առաջվայ անունը ստանայ,—այն է քաղաքական կոդէքսի անունը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ՎԱՐԹԻԿԸ

(Շարունակութիւն և վերջ)

Կէս օր էր:

Վերակացու Ֆէրրաչը հրամայեց աղջիկներին դադարել գործելուց և նստել ճաշելու: Նոքա լուացուեցան մերձակոս առուակի ջրով և խումբ խումբ նստեցին մօտաւոր ուռիների հովանուց տակ, կանաչ խոտերի վերայ, և ամէն մինը, բաց անելով իւր հետ բերած հացը, սկսան ճաշել:

Իսկ Վարթիկը. իւր ընկերուհի Նարգէսի հետ, հեռացան մի ծառի տակ.

—Վարթիկ, դու ինչ ես բերել տանից ուտելու: Հարցրուց Նարգէսը:

—Մեք այսօր ոչինչ չունէիմք, քոյրիկ. ասաց Վարթիկը. բերել եմ միայն մի կտոր պանիր և սոխ, հացի հետ:

—Ինձ առաւօտը մայրս տուաւ կարաք և սեր, միասին կուտեմք, քոյրիկ: Կրկնեց բարեսիրտ Նարգէսը:

Նոքա նստեցին ծառի տակ և ամէն մինը բաց արաւ իւր հացի թաշկինակը:

—Ձեր կովերը չէն կթվում: Հարցրուց Նարգէսը:

—Մեր կարմիր կովը երեք շաբաթ է, որ ցամաքել է, կաթ չէ տալիս, մայրս ասում է, թէ պառաւ Գօղէն նաղարլամիշ արաւ: (չար աչքով տուեց), գիտես, նա ինչ չար աչք ունի, Նարգէս:

—Ուֆ, նրա աչքը տրաքի, ափսոս չէր կարմիր կովը: Ցաւելով խօսեց Նարգէսը:— Բայց Վարթիկ, քոյրիկ, մեր կովն էլ նազարլամիշ արին, ցամաքեցաւ, կաթ չէր տալիս, մայրս գնաց տէրտէրի մօտ, մի վառեակ, տասն հատ ձու ընծայ տարաւ, տէրտէրն մի զօրաւոր գիր էր արած թղթի վերայ, այն գիրը մայրս կաչու մէջ կարեց, և քարշ տուաւ կովի եղջիւրներէն, քո արեը, Վարթիկ, կաթը հէնց այն օրը սկսեց աղբիւրի պէս վազել:

—Այդ լաւ է, Նարգէս ջան, ես էլ կասեմ մօրս գնա տէրտէրի մօտ, գիր անել տայ:

Այսպէս խօսելով երկու ընկերուհիքը ուտումէին իւրեանց պարզ և աղքատիկ ճաշը: Միայն Նարգէսը նկատեց, որ Վարթիկի դէմքը այն օրը գունատուած և տխուր էր: Եւ զարմացաւ, որ իւր ուրախ և զուարճախօս ընկերուհին, այն օր իւր խօսքերին տալիս էր սառն և հատուկոտոր պատասխան: Այդ պատճառաւ հարցրուց.—

—Վարթիկ, ինձ երևում է, այս օր քո քէֆը տեղը չէ, դու խիստ գունատուած ես:

—Այո, քոյրիկ, մի փոքր վրդովուած եմ ասաց Վարթիկը տխուր ձայնով,

—Ինչու:

—Այն անիծուած խանզադէն այսօր խիստ վրէշտացրուց ինձ:

—Ես տեսայ, նա խօսում էր քեզ հետ, բայց ասա, ինչպէս վշտացրուց քեզ: Հարցրուց Նարգէսը անհամբերութեամբ:

Վարթիկը պատմեց խանի որդւոյ բոլոր խօսակցութիւնը իւր հետ: Նարգէսը զարմանալով լսում էր նորան, և նա, խօսքը դարձնելով դէպի խանի որդին, ասաց արհամարանքով.

—Էհ, հողը քո գլխին, լաւ բան է մտածել...: Բայց Վարթիկ, հոգիս. դարձաւ նա դէպի իւր ընկերուհին. չը լինի որ նրա խօսքերէն խաբուիս. թէ չէ. հոգւով և մարմնով կը կորչիս, քոյրիկ:

—Միթէ ինձ յիմար ես կարծում, Նարգէս, որ ես խաբուիմ նրա խօսքերէն, և ուրանամ իմ հաւատքը: Կրկնեց Վարթիկը:

Նարգէսը, որոյ մէջ խիստ անհանգստութիւն պատճառեցին ընկերուհու խօսքերը, կամեցաւ ևս առաւել պնդել նորա համոզմունքը, ասելով:

—Գիտես, քոյրիկ, թուրքերու ամէն բանը, իմ մայրս ինձ շատ անգամ ասել է, նրանք մեռան չունին, Խաչ, չունին, Աւետարան չունին: Մայրս ասում է, նրանց երեխերքը չեն մկրտվում, դրայ համար չատ վատ հոտում են: Մայրս ասում է, նրանց մեռելները գօռնագիղ են լինում:

—Ինչ է նշանակում գօռնագիղ լինել: Ժպտելով հարցրուց Վարթիկը:

—Նշանակում է. որ մեռելները գիշերներով դուրս են գալիս գօռից (գերեզմաններից), և չան լակոտների կերպարանքով, կանգնում են ճանապարհների վերայ, հաչում են:

—Այդ դրուստ է, Նարգէս. պատասխանեց Վարթիկը. ես լսել եմ, որ մի գիւղացի մարդ գիշերով անցանելով գօռխանէքանց կողմից, տեսել էր մի շատ սիրուն չան լակոտ, առել էր նորան և բերել էր իւր տունը, դրել էր նորան մի կողովի տակ, որ առաւօտեան կաթ տայ, մեծացնէ, բայց առաւօտը վեր առնելով կողովը՝ շատ զարմացել էր, տեսնելով պատանքած մի ահագին մեռել դրած էր կողովի տակին:

—Այդ ես էլ եմ լսել. կրկնեց Նարգէսը: Բայց դու գիտես դժոխքում նրանց օրպէս են չարչարում:

—Գիտեմ. պատասխանեց Վարթիկը. ասում են նրանց բերանները կրակում կարմրացրած երկաթի գլուխներ են կոխում, և ղլիներին նոյնպէս կրակում կարմրացրած երկաթէ արաիշներ են դնում:

—Վայ. վայ. և նրանց գլուխը երվում է, ճզճզում է, էդպէս չէ: Հարցրուց Նարգէսը սարսափելով, կարծես ինքը տեսնումէր մի այդպիսի երեւոյթ:

—Բա, քոյրիկ, նոքա այրվում են. բայց մոխիր չեն դառնում, որ մնան ու երկար այրուին: Բայց քրիստոնեայի փառքը արքայութեան մէջ. գիտես, մայրս ինչպէս է պատմում: Ցառաջ տարաւ Վարթիկը:

—Ասա, ասա՛ ինչպէս: Հարցրուց Նարգէսը:

Վարթիկը չը կարողացաւ պատասխանել, որովհետև, վերակացու Ֆէրրաչը վերայ հասաւ, և հրամայեց վեր կենալ, և սկսել գործը:

Նոքա արդէն աւարտել էին ճաշը, լսելով վերակացուի սպառնալից խօսքերը, փութաթեցին հացի մնացորդները թաշկինակի մէջ, և ամէն մինը զբաղեցաւ իւր գործին:

Նոյն աւուր երեկոյեան պահուն աղջիկները իւրեանց գործը վերջացրին խիստ վաղ, որովհետև այն օր նոցա ամէն մինին բաժնուած էր փոքր գործ:

Բայց Վարթիկը չը կարողացաւ վերջացնել, նորա համար որ, այն օր նորան նշանակուած էր միւս օրերին համեմատելով բաւականին շատ գործ:

Աղջիկները, վերջացնելով իւրեանց գործը, դեռ արևը չը մտած, տուն գնացին: Բայց վերակացուն հրամայեց Վարթիկին մնալ այնտեղ, մինչև կը վերջացնէր իւր գործը, և թողեց օրիորդի վերայ հսկելու մի ծերունի թուրք, ինքն գնաց:

Մութը պատել էր աշխարհը, երբ Վարթիկը, վերջացնելով գործը, առնց իւր խոպիկը, և իւր քաղհան արած խոտերէն մի քանի խուրձ կապեց, չալակն առնց, որ տանէ իւրանց հարթերի համար, և սկսաւ դիմել դէպի գիւղը։

Անցանելով ձեռատունկ անտառի մօտից, օրիորդը նկատեց, որ իւր վերայ յարձակուեցան մի քանի մարդիք, մի թանձր քող ձգեցին նորա գլխին, աչքերը կապեցին, և բերանը փակեցին աղլուխով, որ ձայն չը հանէ։

Սարսափը և երկիւղը բոլորովին ուշաթափ արեցին նոյ ան, խեղճ օրիորդը անդդայ անկաւ գետնի վերայ։

Ցափշտակողները, դնելով նորան ձիու վերայ, անհետացան դիշերային խաւարի մէջ։

Դ.

Գիւղի խրճիթներում վառուեցան դիշերային ճրագները։ Վարթիկի ծնողքը, նորա եղբայրները, անհանդիստ սպասում էին նորան, բայց նա դեռ չէր դարձել։

—Որդի, խաչօ, Մաթոս, ձայն տուեց օրիորդի մայրը. քար է ձեր սիրտը, ինչ է, դէ, մի գնացէք, ինչ եղաւ այդ ջրատար աղջիկը, այդչափ ուշացաւ։

—Մայրիկ, ինչու ես անհանդիստ լինում, պատասխանեցին որդիքը, կարելի է իւր ընկերուհիներից մինի մօտ գնացած լինի.

—Չէ, այդքան ուշ մի օր չէր ուշանում նա։ Պատասխանեց մայրը չարադուշակ զգացմունքով։—Գնացէք, նորա ընկերուհիներէն հարցրէք, խմացէք, ուր մնաց խեղճ աղջիկը։

Օրիորդի եղբայրները դուրս գնացին և սկսան դրացիների տներում հարցնել իւրանց քրոջ մասին։ Բայց ոչ մի տեղ չը գտան նորան։ Միայն նորա ընկերուհիքը պատմեցին, թէ նորա թողեցին Վարթիկին բրնձի դաշտումը միայնակ, որովհետև նա դեռ չէր վերջացրել իւր օրական գործը։

Որդիկը խիստ վազեցին դէպի տուն, այդ լուրը յայտնեցին ծնողքներին։

—Նորան պատահել է մի վատնդ։ Ասաց ծերունի Հայրապետը, և իւր ցուպը առնելով վեր թռաւ տեղից։

—Վա՛յ, իմ Վարթիկս։ Հառաչեց պառաւ Նաղլուն և վազեց դէպի դուրս։

Օրիորդի եղբայրներն նոյնպէս նախադուշակելով մի չար դէպք, ծնողաց հետ միասին, վազեցին դէպի բրնձի դաշտերը։

Գիշերային խորին լռութեան մէջ խղճալի ծերնողաց և եղբայրների ձայնը հնչում էր հեռու և հեռու խուլ դաշտերում, շրջակայ բլուրներից լսելի էր լինում միայն նոցա ձայներիտխուր արձակումը, բայց նոքա չը լսեցին երբէք դեղեցիկ Վարթիկի ձայնը։

Նորա հասան բրնձի դաշտերին, ուր ցերեկով գործել էր նա, այնտեղ դարձեալ չը գտան նորան։

Պառաւ մայրը, իբրև մատակ առիւծ, որոյ բոյնից խլել էին կորիւնը կատաղաբար սկսաւ վազվզել դաշտերի մէջ։ Նորա ծերունի ամուսինը հետևեց իւր կնոջը։ Եղբայրները նոյնպէս ամէն մինը դէպի մի կողմ գնացին։

Լուսինը իւր գունաւոր դէմքը ցոյց տուեց թուխ ամպերի տակից։ Գիշերային խաւարը մի փոքր պարզուեցաւ։ Ցանկարծ լսելի եղաւ խաչօի ձայնը։ Ամէնքը դէպի այն կողմը վազեցին։ Խաչօն կանգնած էր ձեռատունկ անտառի մօտ, ուր պատահեցաւ խղճալի օրիորդի յափշտակումը։

—Ահա նորա նշանները։ Ասաց խաչօն ցոյց տալով գետնի վերա ընկած մի քանի առարկաներ։

—Այդ նորա խոպիկն է. այդ նորա տոպի շալակն է, ահա նորա հացերի թաշկինակը... Կոչեց ծերունի Հայրապետը և անդաւ գետին...։

—Իմ Վարթիկս կորա՛... Հառաչեց պառաւը և ուշաթափ անկաւ իւր ամուսնի գրկում։ Այդ միջոցում Ուրմի քաղաքի մէջ, որ աւելի հեռու չէր այն գիւղից, ուր պատահեցաւ այդ անցքը, մի հոյակապ ապարանքում, փառաւոր կերպով լուսաւորուած էր մի սենեակ։ Նորա լուսամուտները, զարդարած գոյնզգոյն, ծաղկանկար ապակիներով, վառում էին կախարդական փայլողութեամբ։ Գեղեցիկ խորասանու գորգեր, չինական հաղուագիւտ ամաններ, բիւրեղային և բրօնզի կարասիք, ոսկի, արծաթ, զոհարներ,—բոլորն միախառնուելով, ցնչում էին պարսկական կեանքի ճոխ և խայտառամտուկ շռայլութեամբ։

Այդ սենեակի մի անկիւնում կանգնած էր մեր ընթերցողին արդէն նախածանօթ կալուածատէր խանի որդին, մնծաչուք կերպով հագնուած, և մի անկիւնում կուչ էր եկած, դեղեցիկ Վարթիկը, դեռ իւր հնամաշ, աղքատիկ հագուստով։

Խանի որդուց առաջև դրած էին զանազան տեսակ կանայի հագուստներ, ոսկեհուռ կարուած մախմուրից, ատլասից, քիշմիրեան շալից, և նուրբ կերպասներից։ Նա իւր ձեռքին բռնած ուներ մի կեղեցիկ օղամանակ, որ վառվում էր զանազան զոհարներով, և ոսկի ապարանջաններ, բազկապեր, մատանիներ, և այլ կանացի զարդարանքներ, որք իւրեանց փալծղութեամբ կուրացուցիչ էին։

—Գեղեցիկ, աղջիկ, խօսեց վերջապէս խանի որդին, ցոյց տալով հագուստների և պաճուճանքների վերայ,—Դոքա բոլորն պատրաստուած են քեզ համար, սիրէ ինձ, և դու քանի բոպէից յետոյ կը լինես թագուհին այդ փառաւոր ապարանքի։

Վերջին բոպէի յուսահատութիւնը կարծես թէ ոգևորել էր խեղճ օրիորդին, անսիկիւղ համարձակութեամբ նա ձեռքը տարաւ դէպի իւր հեռամաշ հագուստը, պատասխանեց.

—Ես բախտաւոր եմ համարում ինձ միշտ այդպէս աղքատ կերպով հագնուիլ, քան այդ փայլուն լաթերի համար, որ իմ աչքին ոչինչ են, սիրել քեզ։

Խչխանի որդւոյ աչքերը վառուեցան վայրենի կատաղութեամբ։ Բայց նա դարձրուց իւր առաջին սառնասրտութիւնը և ասաց մի սարսափելի ծիծաղ նկարագրած իւր երեսին։

—Գեղեցիկ օրիորդ, իզուր է քո բոլոր ջանքը ընդդիմանալ իմ կամքին, դու այդ բոպէիս քո բոլոր ակարութեամբ իմ որսն ես, լսէ ինչ որ ասում են քեզ, ուրիշ ճար չունիս դու բայց միայն սիրել ինձ...։

Օրիորդը անսիկիւղ կերպով պատասխանեց.

—Ես երբէք չեմ կարող սիրել ձեզ։

—Դու չես սիրելու ինձ. կոչեց երիտասարդը կատաղութեամբ. ես այս բոպէիս կը հրամայեմ կոտոր կոտոր անել քո մարմինդ, և ածել իմ բարակների և ջերի առջև, ես կը հրամայեմ իմ սրիկայներիս կոտորել քո ծնողքը, քո եղբայրները, ես խսպառ կը ջնջեմ քո աղգատոհմը աշխարհի երեսից...։

Օրիորդը բոլորովին ուրացել էր իւր անձը, նա իւր կեանքի համար չէր ափսոսում, բայց լսելով վերջին խօսքերը իւր ծնողաց և եղբայրների մասին, նա դողաց բոլոր մարմնով, երկու հակառակ զգացմունք նոյն բոպէին սկսան պատերազմել նորա անմեղ սրտի մէջ, մինը՝—քնքուշ և փափուկ սէրը դէպի իւր ծնողքը և եղբայրները, միւսը—զզուելի սէրը դէպի խչխանի որդին։ Նա խիստ ողորմելի ձայնով հարցրուց՝—

—Դու և իմ ծնողքների ու եղբայրներիս վերայ էլ պիտի՞ դործ դնես քո անգթութիւնը։

—Անտարակոյս, եթէ դու չը սիրես ինձ։

Խղճալի օրիորդը չոքեց յատակի վերայ, իւր արտասուքով լեցը աչքերը բարձրացրուց դէպի երկինք և կոչեց.—Իշխանի որդւոյ սրտում ծագեցաւ շառաւիղը իւր ցանկալի յոյսի։ Նա մօտեցաւ օրիորդին, բռնեց նորա թևքից և վեր բարձրացրուց։ Օրիորդը չընդդիմացաւ։ Նա նոյն բոպէում գտանվում էր մի սարսափելի վրդովմունքի մէջ։ Խչխանի որդին դրկեց նորան և կամենում էր իւր սրբապիղծ շրթունքը հպեցնել օրիորդի նոյն բոպէին դունատուած թշերին։

Ցանկարծ, կատուի արագութեամբ, սրնթաց որպէս եղջերու, օրիորդը դուրս պրձաւ խչխանի որդւոյ դրկից և վազեց սենեակի միւս ձայրը։ Նա արդէն իւր ձեռքում ունէր օմէլարի կեռ խէնջալը, որ դուրս քարշեց խչխանի որդւոյ գօտիէն։ Օրիորդի սևորակ աչքերը վառվռեցան սարսափելի կրակով։ Նա խիստ ղզալի ձայնով կոչեց.—

—Մահը կաղատէ ինձ քո ձեռքէն...։

—Եւ օրիորդը խրեց էր փափուկ կուրծքի մէջ մահառիթ խէնջալը։

—Նա թաւալուեցաւ գետնի վերայ։ Ցաք արիւնը առուակի նման սկսեց հոսուիլ նորա կուրծքէն։

Խչխանորդին, սառած արձանի նման, երկար կանգնած. նայում էր իւր զարհուրելի զոհի վերայ։ Նա կատաղաբար վետեց գլխի մազերը և կոչեց.

—Նա մեռաւ...

Նոյն դիշերում քաղաքի բաղնիքների խողովակների (կլօակ) մնի մէջ ձգեցին արիւնով ներկուած մի դիակ։ Այդ անբաղդ Վարթիկի մարմինն էր...։

Մելիքզադէ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկայում հրատարակվումն 5845 օրագիրներ։ Նոցանից 574 ամենօրեայ օրագիրներ են։

***

Բժիշկ պ. Բուրդը նոր հետազօտութիւն է արել Եւրոպայում, որից երևումէ, թէ պղինձի հանքերում աշխատող մշակները հաղիւ են հիւանդանում խոլերայով։ Փարիզի պղինձագործների „bon accord“ անվանված ընկերութեան մէջ, որը 1819 թ. հիմնվեցաւ, ոչ մի մշակ երբէք խոլերայով մեռած չէ։ Իսպանիայի Միօ-Տինգօ քաղաքը, որը շրջապատված է պղինձի հանքերով, երբէք չէ ենթարկվել խոլերային։ Հետաքրքիր կը լիներ ուրիշ երկիրներում հետազօտութիւններ անել։

***

Գերման. „Allgemeine Zeitung“ լրագիրը պատմում է որ Պետերբուրգից գնացել են Ցիւրիխ (Զվիցերիա) քանի մի ռուս աղջկերք և տիկիններ համալսարանի մէջ ուսում առնելու համար։ Նորերումս Ցիւրիխի համալսարանը պահանջել է որ նոր մտնող կանայք զիմնազիոնի հարցաքննութիւն տան։ Այդ պատճառով յիշեալ տիկինները արդէն Ս. Պետերբուրգում զիմնազիայի հարցաքննութիւնը տալուց յետոյ ուղևորվեցին դէպի Ցիւրիխ։

***

Ս. Պետերբուրգից հաղորդում են „Մեղուին“ որ բժշկական ճեմարանի հիւանդանոցում վախճանուեցաւ ուսանող Ստեփան Մութաֆեանցը, որ Նէչայեվի գործին մասնակից էր և որին դատաստան երկու ամսով միայն բանտարկվելու դատապարտեց։ Բայց նա մինչև դատաքննութեան աւարտուիլը 20 ամիս բանդումն էր արդէն։ Այդ երկար բանդարկութեան միջոցում նա միանդամայն զրկվեցաւ իւր առողջութիւնից և քանի մի ամիս միայն ապրեցաւ։

***

„L'Eclair“ լրագիրը պատմում է թէ այս օրերս մեռաւ Փարիզում մի աղքատ կաթոլիկ աբեղայ, որին բոլոր Փարիզը ճանաչում էր իւր բարի գործերի և աղքատների մասին իւր անդադար հոգացողութեան համար։ Նա թողեց իւր բոլոր կարողութիւնը, բաղկացած մի վերարկուից, մի ժամագրքից, մի չուանից (թոկից) որով նա իւր գոտիկը կապումէր, մի քսակից և պ. Տիէրի պատմութեան մի հատորից։ Նա թողեց յետագայ կտակը։

Ես կտակում եմ։

Միջօ Արբային իմ ժամագիրքը, որովհետև նա իրանը չէ կարդում։

Պ. Ժիլ Ֆավրին իմ վերարկուն որ նա նորանով ծածկի իւր ամօթը։

Պ. Գամբէտտային իմ չուանը, որ նա նորան իւր վիզը դցի։

Պ. Տիէրին իւր պատմութիւնը, որ նա իւր գերվածքը նորից ընթերցասիրի։

Ֆրանսիային իմ քսակը, որովհետև գուցէ չուտով նա նորան նորից կը հարկաւորվի։

***

Վերջին վիճակագրական տեղեկութիւններից երևում է, որ Գերմանիայում կան այժմ 60,000 ժողովրդական ուսումնարանները, որտեղ ուսումն առնում 6 միլիոն աշակերտ։ Ուրեմն իւրաքանչիւր 1000 բնակիչների վերա հաշվում է 150 ուսումնարան։

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ԱԽԱԼՑԽԱՑ —Ց. Գեղ—Ձեր կատաղերդութիւնը չի կարող տպվել։ Այդպիսի մեծ գրուածները յարմար չեն „Մշակին“ Լրագիրը դրամատիկական գրուածներ չի կարող տպել։—Ումը կը կամենաք յանձնենք, որ ձեզ հասցնեն։

ՁԱՐԱԹԱԼ —Մեկ. Պաշ—Ձեր գրուածքը կը տպուի։

ԹԻՖԼԻԶԻ ՓՕՍՏԸ։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ։ Ռուսաստան, Արտասահման, Քութայիս, Դարբանդ և Երևանի գաւառը։

ԵՐԵՔՇԱԲԹԻ։ Բաղու, Գանջա, Շուշի, Շամախի։

ՁՈՐԵՔՇԱԲԹԻ։ Քութայիս, Ռուսաստան, Արտասահման, Երևան, Ախալցխա Դարբանդ։

ՀԻՆԴՇԱԲԹԻ։ Ռուսաստան, Արտասահման։

ՈՒՐԲԱԹ։ Քութայիս, Երևան, Ախալցխա Զակաթալ, Նուխի։

ՇԱԲԱԹ Բաղու, Ռուսաստան, Արտասահման, Դարբանդ, Գանջա։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՒ ԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻԶԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(յունիսի 8-ին)։

ՈՍԿԻՆ, (պօլուիմպերիալ) . . .	6	ռ.	7	կ.
ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ (բարաթ) Պօլս.				
վճարելիք (լիրա Օսմանեան) .	6	„	70	„
ԲԱՄԲԱԿԸ Երևանու.	5	„	20	—
„ Ամերիկայի սերմից .	6	„	30	—
ԹԱՄԲԱԿՈՒ Տրապիզոնի անքօք	12	„	—	—
ՇԱԲԱՐԸ Ռսի (Բրօցկու)	8	„	65	„
„ „ միւս տեսակը . .	8	„	50	„
„ զազրանիցու տրանցիդ.	5	„	60	„
մաքսը վճարած	8	„	75	„
ՇԱՔԱՐԱՒԱԶԸ Ռսի.	8	„	20	„
ԲՈՒՐԴԸ թուչի	9	„	50	„
„ թարեքեամի	7	„	50	„
ՂԱՀՎԱ Լիվանի լաւը.	13	„	50	„
„ Մարտինիկոյի, ցածրը .	12	„	—	—
„ Մօկո, շատ լաւը . . .	14	„	50	„
ՂՊԵՂԸ	11	„	50	„
ԵՐԿԱԹ.	2	„	20	„
մինչև	3	„	50	„
ՄՈՄ	12	„	—	—
ԱԼԻՒԻՐԸ կրուպչատկայ Ռուսաստանի բերքը փութը. . . .	3	„	60	„
ԱԼԻՒԻՐԸ կրուպչատկայ Ախվերդեանի տեղական ջաղացից (Գեանջայում). . . . . № 1 փութ	3	„	20	„
„ № 2 „	2	„	40	„
„ № 3 „	2	„	10	„
ԱԼԻՒԻՐԸ Գեանջու հասարակ . .	1	„	60	„
„ Շորագեալու	1	„	70	—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ։

(մայիսի 29-ին)

ԼՕՆԴՕՆ.—մի ռուբլի ածէ $32^{15}/_{16}$ պէնս (փոխանակ 40 պէնս)։

ՓԱՐԻԶ.—մի ռուբլի ածէ $347^{3}/_{4}$ սանտիմ (փոխանակ 400 սանտիմ)։

Առաջին նեքքին 5% փոխառութեան տոմսակ $153^{3}/_{4}$

Երկրորդ $151^{3}/_{4}$

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սօլօլակի նոր փողոցումը, Գարադավօյէ պրավլէնիայի դեմուդէմ „Café restaurant de Paris“ հիւրանոցումը կարելի է վարձել սենեակներ ընտիր մեօբլով օրական 3 ռուբլուց մինչև 1 ռուբլի, իսկ ամսով վարձողներին կը լինի զիջումն։

Սենեակները կարելի է վարձել ճաշով և առանց ճաշի։ Ճաշը երկու կերակրից բաղկացած արժէ ամիսը 10 ռուբլի, իսկ երեք տեսակից—ամիսը 15 ռուբլի։ Կարելի է ճաշ ստանալ և տօմսակներով հեռաւեալ գներով։

Մի ճաշը երկու տեսակ կերակրից մի գաւաթ սուրճով և կէս չիշ գինով արժէ.....60 կ.

Մի ճաշ երեք տեսակ կերակրից, մի գաւաթ սուրճով և կէս չիշ գինով արժէ.....80 կ.

Իսկ մի ճաշը չորս տեսակ կերակրից, մի գաւաթ սուրճով, և կէս չիշ գինով արժ է.....1 ռ.

Իւր կողմից հիւրանոցի տէրը համոզված լինելով, որ չէ կարող ամեն ճաշակի բաւականութիւն տալ, չէ կամենում մեծամեծ խոստումներ տալ իւր ներկայ և ապագայ այցելուներին։

Дозволено Цензурою. Тифлисъ, 8 Іюня, 1872 г. Տէրէթէլի և ընկ. (Նախկին Դաւթեանի տպարան) Խմբագիր—հրատարակող Գրիգոր Արծրունի։